# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

  Արայիկ Հարությունյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Թբիլիսի (Վրաստան)

2019 թվականի մայիսի 30-31

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլի

- ***ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ***

  Պաշտոնական այց երկկողմ համագործակցության խթանման, աշխատանքային ծրագրերի քննարկման, հայաբնակ տարածքների խնդիրների վերհանման նպատակով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պաշտոնական այցով Վրաստանում գտնվելու ընթացքում հանդիպել եմ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Միխայիլ Բատիաշվիլիին, որի ընթացքում քննարկել են երկկողմ համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր, մասնավորապես, Վրաստանում հայերենի ուսուցմամբ հանրային դպրոցներում լեզվի դասավանդման, ուսուցիչների

վերապատրաստման և դասագրքերի մատակարարման վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Վրաստանի դպրոցներում հայերեն դասավանդող ուսուցիչների որակավորման բարձրացման նպատակով հայկական կողմը մասնագետներ կտրամադրի:

Անդրադարձ է եղել նաև բուհական և գիտության բնագավառում համագործակցության հարցերին, մասնավորապես, արհեստական բանականության ոլորտում փոխգործակցությանը: Քննարկվել են նաև տարբեր ոլորտներում աշխատանքային խմբերի ստեղծման հնարավորությունը՝ փորձի փոխանակման և առկա խնդիրների լուծման նպատակով:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև ամառային դպրոցների հարցը. Արդյունքում՝ օգոստոսին մի քանի տասնյակ վրացի աշակերտներ կայցելեն Հայաստան, մասնավորապես, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, իսկ ՀՀ աշակերտները կլինեն Վրաստանի ամառային դպրոցներում: Անդրադարձ է եղել նաև ինժեներական լաբորատորիաների պատանեկան ծրագրերի հայաստանյան հաջողված փորձին և դրանք Վրաստանում ներդնելու հնարավորություններին:

***Ստորագրությունը, ամսաթիվը***

Արայիկ Հարությունյան
05.06.2019